«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Պատիժը մանկավարժության մեջ որպես հետևանքների արվեստ
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Մարուս Մկրտչյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Պ. Սևակի անվան N8 հիմն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Պատժել պե՞տք է, թե՞ ոչ 4

Գլուխ 2. Այլոց փորձի ուսումնասիրության համառոտ ակնարկ ----------5

Գլուխ 3. Ճիշտ պատժելը մանր քայլերի արվեստ . որոնք են այդ քայլերը և

ինչպես անել 7

Գլուխ 4. Պատիժը հնարքների ամբողջություն ----------12

Եզրակացություն 20

Հղումներ 21

Ներածություն

Դաստիարակությունը արդիական թեմա է բոլոր ժամանակներում, աշխարհի բոլոր ծայրերում ողջ մարդկության համար: Իսկ դաստիարակության մեջ պատժի առկայությունը կամ բացակայությունը ամենաքննարկվող հարցերից մեկն է, քանի որ կարող է լինել միջոց և լայն կիրառություն ունենալ ոչ միայն մանկավարժության, այլև տարբեր ոլորտների մեջ:

Աշխատանքի նպատակն է սեփական դիտարկումները, մանկավարժական գործունեության ընթացքում և արդյունքում ձեռք բերած փորձը համակարգել և կիսվել, կանխատեսել պատժի արդյունավետության ուղղությունները և կատարելագործել ոչ միայն պատժի ձևերը զանազան փորձառություններում, այլև մանկավարժական գործունեությունը:

Իսկ առաջադրված խնդիրներն են.

- ուսումնասիրել երեխաների հոգեբանությունը,
- բացահայտել, վերլուծել և գնահատել դաստիարակության ընթացքում ստեղծված կնճռոտ իրավիճակները, երեխայի անցանկալի վարքը,
- կայացնել արդարացի որոշումներ,
- կիրառել ճիշտ պատժամիջոցներ,
- փորձարկել պատժամիջոցների բազմաթիվ ձևեր ու հնարքներ՝ առանց վնասելու երեխաներին ֆիզիկապես ու բարոյահոգեբանորեն,
- դաստիարակության մեջ ընդգրկել և այս դաշտ բերել հենց իրենց՝ երեխաներին,
- պատիժը դարձնել հետևանքների արվեստ:

Գլուխ 1. Պատժել պե՞տք է, թե՞ ոչ

<<Դաստիարակությունն առաջնություն ունի կրթության նկատմամբ: Մարդուն ստեղծում է դաստիարակությունը>>[1]: Էքզյուպերիի բազմաթիվ մտքերից այս մեկը թթխմոր է դարձել իմ մանկավարժական գործունեության ողջ ընթացքի համար և կապույտ երկնքի տակ գտնվող իմ բաժին հատվածի <<թոնրում>> իր տաք-տաք հացերն է թխում արդեն շուրջ 30 տարի: Այդ հացերը կյանք ճանապարհած իմ սերունդներն են՝ տարիների փորձառության և հմտությունների ձեռքբերման շնորհիվ ավելի անուշաբույր, համով ու ստացված: Պատիժ… մանկավարժության մեջ… այն էլ՝ որպես հետևանքների արվեստ: Որտեղի՞ց ծնվեց այս հարցը, ինչու՞:

Համատարած արժեզրկումի այս օրերին, երբ նորի ու հնի պայքար է և քաոս, երբ իրենց կռիվն են տալիս ազգայինը- հայրենականն ու օտար- համամարդկայինը, դպրոցի ու մանկավարժի արժեզրկման մեր օրերում հաճախ եմ լսում (ծնողներից, հոգեբաններից, սոցիոլոգներից, կրթության փորձագետներից), որ երեխային չի կարելի պատժել: Չի՞ կարելի, ինչու՞, ինչպե՞ս դաստիարակել առանց պատժի. հնարավո՞ր է: Մի՞թե մարդկային միտքն ու գիտակցությունը հասել են Ամենաբարձյալի կատարելությանը: Հնարավո՞ր է դաստիարակություն առանց պատժի. գոնե ես մարդու զարգացման պատմության ողջ ընթացքում՝ Ադամից մինչև այսօր, նման բան չեմ տեսել: Պատիժը հին է այնքան, որքան մարդկային հասարակությունը և գուցե հենց մարդու հետ է ծնվել կամ նրա մեղքի: Չէ՞ որ առաջին պատիժը Բարձրյալի կողմից էր, որ կրեցին Ադամն ու Եվան, երբ հայտնի պատճառով վտարվեցին դրախտից: Պատիժը դաստիարակության ձև է, զսպօղակ, անհրաժեշտություն, քանզի առանց պատժի մենք գործ կունենանք թողտվության հետ, որի մեջ հայտնվում է մարդը, առավել ևս՝ երեխան: Եկեք մտածենք մանկավարժական հոգեբանության մեջ ողնաշարային նշանակություն ունի մոտիվացիայի խնդիրը

1. Տես Աֆորիզմներ (Երևան <<Հայաստան>> 1989 թ.), էջ 92

.ինչպես ներգործել երեխայի վրա, որ ստանաս ցանկալի արդյունք, վարքագիծ: Ուրեմն պատժել… այո՛:

Այլ հարց է, թե ով իրավունք ունի պատժել, ինչպե՞ս, ե՞րբ, որտեղի՞ց սկսել, մինչև ու՞ր գնալ, որ վերջնարդյունքը լինի ցանկալին: Շատ հաճախ պատիժն ու հանցանքը կարող են նույն ցողունի վրա աճել և պատժողը՝ հանցագործ, պատժվողը՝ անմեղ զոհ դառնա:

Հակադրվելով մեր օրերի վայ- մարդասերներին՝ ուզում եմ կիսվել իմ փորձով, օրինակով, դիտարկումներով և սուբյեկտիվ կարծիքով, հետազոտական արդյունքներով: Որքանո՞վ այն համոզիչ կլինի՝ դատեք ինքներդ: Կարծում եմ՝ մանկավարժին օդ ու ջրի պես անհրաժեշտ է պատժելը, բայց այն պիտի դառնա հետևանքների արվեստ, ինչը ես՝ համեստ ուսուցիչս, ձեր խոնարհ ծառան, կփորձեմ պարզաբանել և մեկնաբանել:

Գլուխ 2. Այլոց փորձի ուսումնասիրության համառոտ ակնարկ:

Լավ, ի՞նչ է պատիժը: Ըստ իս, ցանկացած սպառնալիք, կոշտ վերաբերմունք, խոսք, արարք, արհամարհանք համարվում է պատիժ, գովեստ, վստահության դրսևորում, հավանում, որ դրական հույզեր է առաջացնում, խրախուսանք: Այո՛, մարդու վարքագիծը պայմանավորված է երկու հզոր գործոններով՝ մարմնով ու հոգով, բայց պատիժը չպիտի լինի ֆիզիկանան բռնություն և կոպիտ վերաբերմունք, թեպետ այն ուղղվում է հենց նույն մարմնին ու հոգուն: Ասենք՝ ցարական Ռուսաստանում <<պատժել>> ասելով հասկանում էին <<ուղղորդելն ու սովորեցնելը>>:

Ֆիզիկական հոգեբանական և բարոյական պատժամիջոցները նախկինում մանկավարժները շատ էին կիրառում:Ներկայումս աշխարհի մոտ 100 երկրներում արգելված է մարմնական պատիժը:

1979 թ. Շվեդիան առաջին երկիրն էր, որ արգելեց մարմնական պատիժը օրենքով:

Ռուսաստանում և նախկին Խորհրդային հանրապետություններում մարմնական պատիժը <<ձևականորեն>> արգելվել է 1917 թ. և, ըստ օրենսգրքի, ուսուցչին

ազատում են աշխատանքից, եթե ձեռք է բարձրացնում սովորողի վրա: Բոլորս էլ գիտենք, իմ սերունդը հատկապես, որ մինչև վերջերս դպրոցներում առկա էր ծեծի մեթոդը:

Մեծ Բրիտանիայում արգելվել է 1886 թ.-ին: Բայց 2011 թ.-ին պահպանողական կառավարական կուսակցությունը հանեց դպրոցում մարմնական պատիժների արգելքը՝ պատճառաբանելով, որ երիտասարդ սերունդն ամբողջությամբ ցրվել է և սկսել է ապրել համացանցում:

Ներկայումս տնտեսապես զարգացած երկրներից միայն Սինգապուրի դպրոցներում սովորող տղաների համար է մարմնական պատիժը օրինական:

Ֆինլանդիայում մարմնական պատիժը դպրոցներում արգելվել է 1914 թ.-ից: Այդուհանդերձ, ըստ Ֆինլանդիայում անցկացված 2010 թ. հարցման՝ երկրի դպրոցականների մեծամասնությունը կողմ է, որպեսզի մարմնական պատիժ սահմանվի իրենց համար:

ԱՄՆ-ի 19 (հիմնականում հարավային) նահանգներում մարմնական պատիժ են կիրառում դպրոցներում, և 1972 թ. ԱՄՆ գերագույն դատարանը հաստատեց, որ մարմնական պատիժը հակասահմանադրական չէ, յուրաքանչյուր նահանգ ինքն է որոշում՝ կիրառե՞լ այն, թե՞ ոչ: Օրինակ՝ Ալաբամա նահանգում հատուկ կարգով որոշված է, թե ինչ երկարություն և հաստություն պետք է ունենա երեխաներին ծեծելու ճիպոտը (24 դյույմ երկարություն, 3 դյույմ լայնություն, կես դյույմ հաստություն): Խփում են միայն հետույքին:

Կարծում եմ՝ այս երևույթի նախապապը տերթոդիկյան մեթոդն է, որի հայկական տարբերակում մտրակվել են ձեռքերը:

Չինաստանում անփույթ ուսանողներին պատժել են՝ հարվածելով ձեռքերին բամբուկի ոստով: Ամենահետաքրքիրն այն է, որ ծնողները միայն աջակցել են երեխաներին դաստիարակելու այս մեթոդին: Այն չեղարկվել է ընդամենը 50 տարի առաջ:

Հայաստանում ծեծի մեթոդը դաստիարակությունից և դպրոցից դուրս մղելու ջանադիր գործը կատարեց լուսավորիչ, մանկավարժ Խաչատուր Աբովյանը:

Այնուամենայնիվ 2013-2014 ուստարվա ընթացքում Հյուսիսային Կարոլինայում մարմնական պատիժների 63%-ը կիրառվել է կռվելու, թույլերին ներկայացնելու պատճառներով, իսկ 37%-ը՝ ուսուցչական անձնակազմի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի, դասի ընթացքում բջջային հեռախոսներ օգտագործելու, անպարկեշտ բառեր, հայհոյանքներ օգտագործելու համար:

Այսպիսով, եթե 70-ականներին բոլոր դպրոցներում բոլոր սովորողների 4%-ին գոնե մեկ անգամ ծեծում էին, ապա այժմ այդ տոկոսային թիվը դարձել է 0.4%:

Տեղեկույթը շուրջանակի մեջ վերցնենք դարձյալ գրքերի գրքով՝ Աստվածաշնչով: Հին կտակարանի Ելից գրքում ասվում է. <<Ես եմ քո Տեր Աստվածը, նախանձոտ Աստված, որը պատժում է երեխաներին իրենց հայրերի մեղքերի համար մինչև 3-րդ, 4-րդ, 7-րդ սերունդ, ովքեր ատում են ինձ>> (Ելք 20:5): Նոր կտակարանում Աստված ներկայացված է ոչ թե որպես Արդար Դատավոր, այլ որպես Ողորմած և Սիրող Տեր:

Սուրբ Ոսկեբերանն ասում է. <<Աստված բարկացած է ոչ թե կրքով, այլ հատուցմամբ և պատժով>>: Ի վերջո ողջ մարդկությունը խոսում է ահեղ դատաստանի մասին, որը մարդկային մեղքերի համար է:

Աստծո խոսքն անգամ հրահանգում է պատժել երեխաներին իրենց հորդորների համար. <<Երիտասարդին անպատիժ մի՛ թողեք, դու նրան գավազանով կպատժես և նրա հոգին կփրկես դժոխքից>> (Առակ 23.13):

Այո՛, սերն ու պատիժը համատեղելի են միմյանց հետ, ոչ միայն համատեղելի են, այլ պարտադիր, բայց այս մասին կխոսենք հաջորդ գլուխներում: Ամփոփելով փաստենք մի ճշմարտություն. բոլոր դեպքերում սովորողը պետք է պատասխանատվություն կրի իր վատ արարքի համար:

Գլուխ 3. Ճիշտ պատժելը մանր քայլերի արվեստ . որոնք են այդ քայլերը և ինչպես անել

ա) Թող տարօրինակ չթվա, բայց պատժելու պատրաստվող մանկավարժի առաջին (կտեսնեք նաև, որ վերջին և բոլոր քայլերին ուղեկցող) քայլը սերն է, սիրառատ հոգի

ունենալը և երեխային անմնացորդ նվիրվելը, սեփական երեխայի պես սիրելը: Մանկավարժը պետք է իր գործի նվիրյալը լինի և միայն սիրելով, ըստ իս, կարող է պատժել և ապա՝ փոխել նրան: Միայն այս դեպքում պատիժը կդառնա <<ընդունելի>> երեխայի համար: Ի դեպ, սիրել չենք կարող սովորել ոչ մի դպրոցում, բուհում, վերապատրաստման դասընթացներին կամ կյանքի փորձով: Այդպես ծնվում ենք. կամ սիրում ենք, կամ՝ ոչ: Ռուս մանկագիր Պրիշվինն ասել է. <<Անմոռուկ տեսնելիս ողջ աշխարհն եմ զգում, բայց եթե հարցնեն՝ քանի թերթիկ ունի նա, չեմ կարող ասել, ևմի՞թե ինձ պետք է ուղարկեք թերթերը հաշվելու, մարդի՜կ, ախր անմոռուկ տեսնելիս ես ողջ աշխարհն եմ զգում>>: Ահա այսպես մանկավարժի աշխատանքը պիտի տանի նրան իր թևերին: Իմ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ ես ավելի կոպիտ վերաբերմունք եմ ցույց տվել, խիստ եղել, քան մեկ ուրիշը, բայց երեխաների համար ավելի ընդունելի և սիրելի եմ եղել, քան նա: Զարմացել եմ, հետո՝ հասկացել. իմ վերաբերմունքը (լավ, թե վատ) սիրուց է ծնվել, նրանցը՝ ընդունված նորմերից:

Սա է գաղտնիքը: Ուրեմն <<Դատավճիռ կայացնելիս պետք է ղեկավարվել մարդասիրությամբ, շրջահայացությամբ ու գթասրտությամբ>>, ինչպես կասեր Մաքիավելին:

Իսկ Սուրբ Գիրքը ցույց է տալիս անձնուրաց սերը ահեղ դատաստանից առաջ: Գողգոթայի զոհաբերությունը վկայում է մարդու հանդեպ Աստծու սիրո աստիճանի մասին. մեզանից յուրաքանչյուրի արարքների համար Քրիստոսը խաչվեց խաչի վրա:

բ) Գուցե երբեմն չենք հասկանում ու չենք ընդունում ակամայից, բայց կանոններով ապրելն ավելի հեշտ է, համոզվել եմ (թեպետ էությամբ խենթ եմ) ու երկրորդ քայլը երեխաների համար որոշակի կանոններ սահմանելն է, կանոններ՝ դպրոցական և մարդկային, իսկ այս հարցում իմ առարկան ինձ լիարժեք թև ու թիկունք է: Դասարանի հետ հենց առաջին հանդիպմանը, առաջին ժամին (երբեմն ողջ դասաժամը չի բավականացնում) ես զրուցում եմ կարելիների և չի կարելիների սահմանի, ցանկալի և մերժելի երևույթների մասին: Բացատրում՝ ինչն է վարքի մեջ ընդունելի, ինչը՝ ոչ: Շատ կարևոր է, որ մանկավարժը մտքերը ձևակերպի հստակ, հասկանալի և միաժամանակ ընկալի երեխաների արձագանքը, սպառիչ և

հաստատուն պատասխաններ տա ծագած հարցերին, ցույց տա, որ վճռական ու հետևողական է լինելու հետևանքների ժամանակ: Նախ պետք է տա՛լ, տալ անձնական օրինակով և հետո միայն պահանջել, որ պատժվողը հետագայում պատճառաբանություններ չունենա՝ արդարանալու կամ պատժից խուսափելու:

Պետությունն էլ ունի օրենքներ, հրատարակված օրենսդրություն, որին պետք է ծանոթ լինի յուրաքանչյուրը, և ոչինչ այնքան չի թուլացնում օրենքի ուժը, որքան անպատժելիության հույսը: Վերջապես պատժի մեջ մարդիկ պետք է տեսնեն բուն օրենքը, մանկավարժի պատժի մեջ՝ նախապես սահմանված կանոնները: Ի՞նչ է ստացվում, որ ուսուցչի պատիժը հետագայում դառնալու է հետադարձ կապի տեսակ, որի տեսքը գուցե տհաճ հետևանքով է: Հետևա՞նք… Իսկ կարելի՞ է հետևանքի տեսքը փոխել և դարձնել հաճելի: Կարելի է, բայց այդ մասին կխոսենք քիչ հետո, օրինակներով:

գ) Երրորդ քայլը թերևս ամենապատասխանատուն ու վտանգավորն է, որ ուսուցչից պահանջում է հոգեբանական մեծ պատրաստվածություն, համբերություն և կամք: Յուրաքանչյուր դասարանի ամենադժվար, անկառավարելի երեխաները դառնում են ջերմաչափ՝ ուսուցչի մանագիտական կարողությունները և հմտությունները որոշելու համար: Նման դպքերում վարքը հանդուգն է, ըմբոստ, որով ուզում են հասկանալ, թե ով է իրենց առաջ կանգնած, և մինչև ուր կարող են հասնել իրենք: Այսպիսի վարքին պետք է պատասխանել հստակ և վճռական: Իհարկե, մեր օրերում ու իրականության մեջ դժվար քայլ է ուսուցչի համար, քանզի պետության ամենախոցելի ու անպաշտպան խավն է, ու տեղից վեր կացած ցանկացած մեկը՝ ծնող, աշակերտ, լրագրող, կարող է հունից հանել ու իրենց խոսքերով <<սարքել ուսուցչի գլխին>>: Այսպիսի անհնազանդության ցուցաբերման դեպքում չպետք է վախենալ, բաց կոնֆլիկտներից չպետք է խուսափել, բայց և պետք է զգուշանալ անիմաստ համառությունից և ճիշտ արձագանքել: Ինչպես ասում են՝ ուսուցչի խստությունը հոր քնքշանքից լավ է: Հակառակ դեպքում կընկնի նրա հեղինակությունը: Ուսուցիչը պետք է ունենա առավելագույն հեղինակություն և նվազագույն իշխանություն: Միայն այս դեպքում կունենանք որակյալ դաստիարակություն և կրթություն: Ուզում եմ կիսվել Էրիկի պատմությամբ: Ակտիվ, շարժուն, ուշ տարիքում ունեցած ծնողների անդրանիկ զավակն էր, ազատ էր, մի քիչ

երես առած: Համբերությամբ և ժպիտով էի սաստում նրան և ցույց տալիս անսասան հաստատակամություն չարաճճիությունների ու բացթողումների շտկման հարցում: Ընդունակ էր, բայց ծույլ, մի քանի անգամ անպատրաստ ներկայանալուց հետո որոշեցի վերջապես 2-ը դնել, որպեսզի ծնողը տեսնի: Վիրավորեց ու որոշեց օրագիր չներկայացնել: Նախազգուշացրեցի. եթե հաջորդ ժամին էլ օրագիր չունենա, 2-ը ճակատին կդրվի: Դարձյալ նրկայացավ անպատրաստ և անօրագիր: Խոստումս կատարեցի: Վիրավորեց, շիկնեց ու ոչինչ չասաց: Հաջորդ առավոտյան դասասենյակի դռների ետևում ինձ սպասում էր զայրույթով լցված աչքերով մի կին. մայրն էր: Ամբողջ դասարանի առաջ սկսեց հոխորտալ, աղմկել, ինձ որակավորել, սպառնալ, որ կնկարի ու սոցկայքեր կտեղադրի իմ արարքը: Ես լուռ լսում էի ու ժպտում. դա նրան ավելի էր զայրացնում: Եվ որքան նրա բառապաշարը հարստանում էր, այնքան Էրիկը ավելի էր ամաչում ու կարմրում: Ես քննախույզ նայում էի Էրիկի խելացի աչքերին ու չէի նկատում նրա ոչ այնքան խելացի մորը: Երբ վերջացրեց, ես ասացի.

-Դուք վերջացրի՞ք: Անգամ չհարցրիք, թե ինչ է եղել, բայց դա կարևոր չէ: Ես ձեզնից չեմ վիրավորվում, բայց ուզում եմ պատասխանել Էրիկին: Դու չես վիրավորվել 2-ից, որովհետև կարող էիր մաքրել ու նոր տուն գնալ: Բայց դու այդպես դիտավորյալ գնացել ես՝ ճանաչելով մայրիկիդ և քաջ իմանալով՝ ինչ կանի նա: Ուզում էիր վախեցնել ինձ և ենթարկել քեզ այնպես, ինչպես մայրիկիդ ես ենթարկում: Չի՛ ստացվի, Էրիկ ջան, ես չեմ նահանջելու: Դու ոչ մեկից առավել չես և ո՛չ էլ արտոնյալ, ուստի պիտի բոլորի պես ենթարկվես դպրոցական կարգ ու կանոնին, ավել բան չեմ պահանջում քեզնից: Հա ու իմացի՛ր, արարքդ ճիշտ չէր, բայց ես առաջվա պես սիրում եմ քեզ: Ու մի խնդրանք. կարո՞ղ ես տղամարդավարի ճիշտ պատասխանել իմ հարցին. ես ճի՞շտ հասկացա: Դու այդպե՞ս ես մտածել:

Ամոթին վայրկենաբար փոխարինեց զրմանքը, ապա զղջումը ու երկու զգացմունքներ, իրար խառնված, նրա աչքերից ինձ նայեցին.

-Այո՛, ճիշտ եք հասկացել, ընկե՛ր Մկրտչյան:

-Ապրե՛ս, սխալդ ժամանակին ճշտով հատեցիր, ես դարձյալ չսխալվեցի. դու խելացի ես ու ազնիվ բաներ կան քո մեջ, որի համար սիրում եմ քեզ: Իսկ Դուք, սիրելի՛ մայրիկ, արեք ինչ ուզում եք, դիմեք որտեղ ուզում եք, ես պատասխանատու եմ իմ ցանկացած

քայլի համար: Բայց ձեր փոխարեն նախ կփորձեի սեփական երեխային հասկանալ և փորձել սանձել:

Դուք չեք պատկերացնի այն շրջադարձը, որ կատարվեց Էրիկի ու ծնողի մեջ: Մայրն սկսեց ներողությունների տարափը. <<Մինչ այստեղ գալը ինձ ասում էին, որ դուք լավ մանկավարժ եք, հոգեբան, բայց ես չէի պատկերացնում, որ այսքան: Ներեցե՛ք խնդրում եմ, ես ուղղակի զայրացա…>>:

Էրիկի համար ես դարձա ամենասիրված ուսուցիչներից մեկը և այն եզակին, ում առարկան սովորում էր: Այնպես որ, ուսուցիչը կարող է չտրվել սադրանքներին, լինել համբերատար և ճիշտ պահվածքով դառնալ հեղինակություն: Երեխան նրա մեջ պիտի տեսնի այն մեծ ուժը, որը բռնություն չի գործադրի, բայց և՝ թույլ չի տա <<նստելվզին>>:

դ) Չորրորդ քայլը դարձյալ ուսուցչից պահանջում է հոգեբանական մեծ հմտություններ: Կա արարք, զանցանք (գուցե հանցանք նաև) և անպայման պետք է տարբերել չմտածված քա՞յլ է, անպատասխանատու արա՞րք, թե՞ դիտավորյալ քմահաճություն: Առաջին երկուսի դեպքում ավելի հեշտ է ցանկալի արդյունքին հասնելը: Ընդամենը մի քանի զրույց, սխալ արարքների և հնարավոր հետևանքների քննարկում, բացատրում ենք անցանկալի վարքը և օգնում, որ նա դրական որևէ համարժեք գործողություն կատարի: Իսկ այ դիտավորյալ քմահաճության դեպքում ուսուցչից ավելի երկար ու հետևողական ժամանակ և պատժաձևեր են պետք: Շատ կարևոր է ախտորոշել արարքը, որպեսզի պատիժը դրան համարժեք ու համապատասխան լինի, հետևաբար՝ արդար:

ե) Հինգերերորդ քայլն ուսուցչից պահանջում է դիտողականություն, զգոնություն, ճիշտ որոշումներ կայացնելու կարողություն: Չպետք է պահանջել անհնարինը: Պատիժը կիրառելուց առաջ պետք է նախ հասկանալ երեխայի ընդունակությունների և կարողությունների սահմանը, չպետք է անցնել թույլատրելիի սահմանը, այլապես արդյունքը կլինի 0, պատիժը կդառնա հանցանք: Երեխայի մոտ կառաջանան ներքին կոնֆլիկտ, շեղումներ, ապա նաև՝ հոգեբանական տրավմաներ: Դյուկլոն ասում է. <<Մեղավորների հանդեպ պետք է լինել խիստ՝ առանց դաժանության և ներողամիտ՝ առանց թողտվության>>: Իսկ մանկավարժի գործը դիպուկ բնութագրող տողերից

մեկը պատկանում է Վ. Պետրոսյանի գրչին. <<Մանկավարժի գործը դաշտը ականներից մաքրողի պես է. մի անզգույշ քայլ և հետևանքն անդառնալի է >>:

Այնպես որ, զգույշ, նրբանկատ, որ դաստիարակողից մեկեն չվերածվենք ակամա հանցագործի: Ամենասուրբ գործը դառնում է սրբապղծություն ու նողկալիություն, եթե հանուն նրա հաղթանակի դիմում ենք հանցագործության:

զ) Մեր քայլարշավն արվեստի վերածող և վերջնագիծը հատող քայլը վեցերորդն է:

Կոնֆլիկտը լուծելուց հետո շատ կարևոր է հանգստացնել երեխային, մեկ անգամ ևս բացատրել, թե ինչպես եղավ պատիժը, որն էր իր սխալը, ինչպես կվարվենք մյուս անգամ: Երեխային հասցնել այն բարձրակետին, որ հասկանա և ընդունի, որ պատիժը զուրկ էր ուսուցչի անձնական հակակրանքից, դրդված էր մանկավարժական նկատառումներով: Պետք է այնպես անել, որ թե՛ պատժվողը, թե՛ պատժողը ժպիտով խոսեն դրա մասին: Երեխան ոչ թե վրեժխնդրության, այլ մեղքի զգացում պետք է ունենա, որն էլ կկանխարգելի անցանկալի վարքի հետագա հնարավորությունը: Իսկ ուսուցիչը դարձյալ պիտի առաջնորդվի սիրով ավելի, քան առաջ, պիտի պահպանի հանգստություն, լինի ջերմ, գրկի, խրախուսական խոսքեր ասի և ի վերջո ցույց տա, որ ոչինչն էլ չէր եղել. չեմ հիշում: Ինչպես կասեր Լառոշֆոկոն. <<Կան դրվատալից հանդիմանություններ, ինչպես և մերկացնող դրվատանքներ >>:

Ամենակարևորը. որպեսզի պատիժը դրական արդյունքներ տա ու փոփոխություններ վարքի մեջ, որպեսզի չտուժի ո՛չ երեխայի ինքնագնահատականը, և ո՛չ էլ պատժողի հեղինակությունը, պետք է պատժել արարքը, ո՛չ երեխային:

Գլուխ 4. Պատիժը հնարքների ամբողջություն

Երբ խոսում ենք պատժի ձևերի մասին, ակամայից մտածում եմ՝ որքան երեխա, այնքան բազմազան ձևեր, քանի որ իմ կարծիքով երեխան ինքն է հուշում ձևը: Ավելին, տարբեր հանգամանքները, իրավիճակները, միջավայրը, ժամանակահատվածը, նույնիսկ տեղն ու վայրը, ազգությունն ու խառնվածքը (հատկապես) ներգործուն ազդեցություն են ունենում: Այս հարցում ես կարող եմ կիսվել իմ փորձով, բայց չեմ

զարմանա, որ այն կիրառելի չլինի մեկ ուրիշի համար: Ընդամենը ձայնի ինտոնացիայի փոփոխություն, և բոլորովին այլ կարող է լինել հետևանքի արդյունքը: Ասել է, թե պատիժը շատ անհատական բնույթ է կրում: Ա՛յո, կան որոշ ընդհանրություններ: Ասենք, չպիտի վնասի երեխայի առողջությանը՝ ո՛չ ֆիզիզկական, ո՛չ հոգեբանական: Երեխան պիտի վախենա ոչ թե պատժից կամ անձից, այլ զայրացող հասարակական կարծիքից: Բոլոր պատիժները պիտի արդարացված լինեն և արդար, հասկանալի, թափանցիկ և ընդունելի երեխայի համար, չնվաստացնեն նրան, չդիպչեն արժանապատվությանը, կոպտորեն չոչնչացնեն նրան ընկերների աչքում: Այո՛, եթե անարդար լինենք, հետևանքը անարդյունք կլինի և գուցե դառնա նոր, անթույլատրելի արարքների աղբյուր: Երեխան կդառնա <<վատը>>, որովհետև ինքը <<այդպիսին է>>, իսկ վարքը կդառնա օրինաչափ:

Խոսենք մի դեպքի մասին. Արայիկը 9-րդ դասարանում էր սովորում, զինվորականի և դատավորի ընտանիքի 3-րդ զավակն էր: Տանից կորած գումարի համար ընտանիքում ծնողների կողմից մեղադրվել էր անտեղի և այդ մեղադրանքից հետո իսկապես գողանում էր: Անկեղծության մի պահի վստահեց ինձ և այս մասին գրեց շարադրության մեջ. <<Հիմա ես գողություն անում եմ, միևնույն է, ինձ մեղադրելու են բոլոր դեպքերում>>: Այդ օրվանից դասարանական բոլոր պատասխանատու գործերը հանձնարարում էի նրան, ասես ոչինչ չգիտմ: Առաջին անգամ, երբ նրան ուղարկեցի պայուսակիցս գրիչը բերելու, շատ անմիջականորեն ասաց.

- Չեմ գնա, գողություն կանեմ:
- Չես անի, որովհետև հավատում եմ քեզ,- վրա բերեցի ես:
- Բայց ինչու՞ եք հավատում:
- Որովհետև դու այդպիսին չես ծնվել, քեզ դարձրել ն:
- Բայց արդեն դարձել եմ, չէ՞:
- Բայց ես նույնպես կարող եմ դարձնել, չէ՞…,- ժպտացի ես բազմանշանակ:

Ես թևերս լայն փռեցի նրա վրա ու վստահության 2 երկար տարիներ աշխատեցինք միասին, և իմ տարածքում ու ներկայությամբ (համենայն դեպս) երբեք գողություն չեղավ: Վերջին անգամ, ի դեպ, նրան տեսել եմ իմ տունը գնելիս: Նա նոտարի

օգնական էր և այնպես էր ներկայացրել իր ուսուցչին, որ նոտարը հարցրեց, թե ինչ եմ արել նրան, որ այդքան հարգում է ինձ, նույնիսկ փաստաթղթերում անվան, ազգանվան, հայրանվան ոչ միայն առաջին, այլև բոլոր տառերը մեծատառով էր գրել, ինչի վրա այնքան երկար ծիծաղեցինք: Նամակը հավելվածում կտեղադրեի, եթե չհամարվեր վստահության չարաշահում:

Պատիժն ընտրելիս կարևոր են նաև երեխայի հոգեվիճակը, հետաքրքրությունները: Դեռ սկսնակ ու երիտասարդ ուսուցիչ էի, երբ ինձ վստահեցին բնագիտական հոսքի 10ա դասարանը: Բոլորն աղջիկներն էին, բարդ կոլեկտիվ: Նրանցից մեկը ՌԴ-ից էր ժամանել և շատ էր տարբերվում մյուսներից: Ազատամիտ էր անչափ և ստանդարտներից դուրս մտածելակերպ ուներ, ինչի համար հայկական ավանդական ընտանիքներում դաստիարակված, մի քիչ էլ կաղապարված համադասարանցիները չէին ընդունում նրան:

Լարվածությունը հասավ գագաթնակետին, երբ մի անգամ ամենահամարձակը մտավ նրա պայուսակ, հանեց այնտեղից թխվածքաբլիթների տոպրակը և բոլորին հյուրասիրելով՝ կերավ: Բանը հասավ քաշքշուկի , ծեծկռտուքի և վիրավորանքի: Մարինեն տանը պնդել էր փոխել դպրոցը: Լսեցի երկու կողմին էլ: Մեկը վիրավորված էր, որովհետև անձնական տարածք էին մտել, և եթե չեմ սխալվում ,անգամ անձնական օրագիրն էին փորփրել:

- Պայուսակ մտնելը շատ վատ բան է, գուցե իմ պայուսակում այնպիսի բան կար, որ չպիտի ուրիշը տեսներ,- լաց էր լինում անդադար:
- Բայց ես ինչ եմ արել, կատակ եմ արել: Թող մենակ-մենակ չուտի, ես իր թխվածքաբլիթները կգնեմ ու կբերեմ:

Խնդրեցի տաք գլխով որոշում չկայացնել և 1 շաբաթ ժամանակ տալ ինձ: Ինչ էի մտածե՞լ: Մարտի 1-ն էր՝ գարնան առաջին օրը: Երկու փունջ ձնծաղիկներ գնեցի և դասամիջոցին գաղտնի դրեցի երկուսի պայուսակներում: Երբ ներս մտան, բացեցին ու տեսան, զարմացան, հարցրին բոլորից, թե էլ ում պայուսակում կա և ով է դրել: Երբ պարզվեց, որ միայն 2 պայուսակում է դրված, հանգիստ և խաղաղ ժպիտով խոսեցի.

- Ես եմ դրել ,Մարինե՛, ինչու՞ չես վիրավորվում ինձնից, չէ՞ որ ես էլ եմ մտել քո անձնական տարածք, ինչու՞ ես ժպտում, տեսնու՞մ ես, որ պայուսակ մտնելը այնքան էլ վատ չէ, որքան կարծում ես:

Ապա դիմեցի մյուսին.

- Ինչու՞ շիկնեցիր, զգացի՞ր, որ պայուսակ մտնելը այնքան էլ լավ կատակ չէ, բայց եթե ուզում ես մտնել, ապա միայն այսպես՝ ծաղիկներով:

Սա էլ պատժի մի ձև էր՝ համոզման և օրինակի հնարքը , որի արդյունքը հրաշալի եղավ ողջ դասարանի համար: Ի դեպ, հերոսուհին Մարինե Ջանոյանն է, աշխատում է Երևանում, ատամնաբույժ է՝ հարգված և հմուտ, կարող եք դիմել:

Հիմա ընդունված կարծրատիպերի մերժման մասին: Շատ են դեպքերը, երբ ծնողներն աղաղակում են ուսուցչի այն պատիժների մասին, որ նսեմացնում է երեխային, հատկապես տղա երեխային, օրինակ՝ բոլորի մոտ դասարան ավլելը: Դե հայ ենք չէ՞, տղան ավել չի վերցնի, իսկ ուսուցիչը, ով դա կստիպի, կարժանանա մահացու պարսավանքների, կդառնա սոցկայքերի հերոսը՝ <<ամենափիլիսոփայական մեկնաբանություններով>>: Բերենք օրինակ սեփական փորձառությունից: 7ա դասարանի Զավենը դպրոցի <<հեղինակություններից>> ու <<հարց լուծող>> տղաներից մեկն էր: Մի անգամ ամբողջ դասարանը կորել էր մանր կտրտած թղթերի մեջ: Պարզվեց, որ Զավենը և երկու տարբեր շարքերում նստած ընկերները դատարկ գրիչի կաղապարով մանր թղթերը փչել են իրար վրա: Բոլորին տուն ուղարկեցի, իսկ Զավենին 2 ընկերների հետ հանձնարարեցի սրբել դասարանը՝ յուրաքանչյուրին իր շարքը: Ընկերները սրբեցին անխոս, մանկական անմիջականությամբ, իսկ Զավենը համառեց: Ես բացատրեցի, որ ինքը անցել է թույլատրելիի սահմանը, իսկ սահմանը խախտողներին սպասում է պատիժ: Հասկացավ, որ տուն չի գնա, մինչև իր բաժին շարքը չմաքրի: Վերցրեց ավելը և սկսեց անփութորեն այս ու այն կողմ շպրտել թղթերը: Ես վերցրի ավելը, ցույց տվեցի, թե ինչպես պետք է դա անել և այնպիսի սիրով ու զվարթությամբ գործ կատարեցի, ինչպես նրա 2 ընկերները: Մաքրեց, գնաց: Մի քանի օր անց ամբողջ դասարանով տոնածառն ու դասասենյակն էինք զարդարում: Երբ վերջացրինք, բավականին ուշ էր, բոլորս տուն շտապեցինք, իսկ Զավենը ինձ հանգստացրեց, որ

գնամ, ինքը դուռը կփակի: Որքան մեծ եղավ զարմանքս, ապա՝ հրճվանքս, երբ ես հաջորդ օրը դասարանը մաքուր տեսա, և Զավենը հաճույքով և հպարտությամբ ասաց, որ ինքն է ավլել: Ես ամուր գրկեցի նրան և ընդամենը մեկ բառ ասացի՝ կեցցե՛ս: Սա էլ անվանենք փոխհատուցման հնարք՝ պատժի տեսակ, երբ վատ վարքի համար դրական որևիցե համարժեք գործողություն է կատարվում:

Պատժամիջոցներից ամենաարդյունավետներից է խոսքը, զրույցը, երբ զրուցում ես, ինչպես հավասարը հավասարի հետ, երբ ընկեր ես դառնում, շարունակում երեխայի մտքերը, բացատրում և տալիս ես որոշակի ժամանակ արարքը վերանայելու, փոխվելու համար:

Հետաքրքիր պատժամիջոցներ են ինքնապատիժը, ինքնազրկումը, հաճույքից զրկումը (սիրելի զբաղմունքից, նստելու տեղից, էքսկուրսիայից), լիակատար ազատություն տալը:

Կարելի է շատ երկար խոսել և բերել բազմաթիվ օրինակներ, բայց ուզում եմ առանձնացնել ևս մեկը. հոգեբանորեն հաստատված է, որ դեռահասները ավելի ականջալուր են իրենց հասակակիցների ընկերական հորդորներին, քան մեծահասակների բարոյական խրատներին , երբ իրենք են իրար հսկում ու պատժում: 2000 թ.-ին իմ նախաձեռնությամբ դպրոցում սկսեց լույս տեսնել <<Դասամիջոց>> աշակերտական թերթը, որի խմբագիրը, նկարիչը, լրագրողները, բոլորը դպրոցի աշակերտներն էին: Ունեինք փակ արկղիկ, որտեղ երեխաները իրենց առաջարկները, հուզող հարցերն էին գրում: Հատուկ էջով անդրադառնում էինք և՛ խրախուսական ու գովելի արարքներին, և՛ դժվար դաստիարակվող երեխաների վատ ու մերժելի վարքին:

Ստորև կներկայացնեմ մի քանի էջ: Արդյունքը անսպասելի էր , երեխաների ոգևորությունը՝ անսահման, դրական հետևանքները՝ ակնհայտ, որովհետև վախենում էին հայտնվել նախ՝ լրագրող ընկերների տեսադաշտում, ապա՝ թերթի էջերում:

ԴԱՍԱՍՏԱՆ

Ոմ էթե բերան՝ ոչ խաբեբայի, այլ երեխայի"

Սակայն էր մեծավոր, որ իր ոգու հենքությանը վարանից, թե անհնարին իրականանալ հնար ունեց, չգիտեցը: Ծնվեց...գաղաքիարը, հետո ինքը:

Երկի հիմա ոմ մեկի չեմ զարմացնի նոր թերով, բայց մեզ հանար (դուցե նաև ձեր) այս թերի ծնունդ իրադարձությունն է: Այստր մեզանից ոչ ոց չգիտի, թե թերի քանի հատար լույս կտեսնի: Ցերեկա սա հենց վերջինն է: Բայց նույնիսկ այդ դեպքում մենք մեր այս ինչ-որ տեղ արկածախնդրական ձեռնարկումը իզուր չենք դիտում: Քանզի մեզ հանար կարևորը դպրոցական թերի գաղափարը իրականություն դարձնելն էր: Իսկ այն, ինչ մեզ չի հաջողվի այստր, կվաղը մեր փոխարեն կանեն ուրիշները: Ցնոց նրանց« Դասամիջոց երկարի...» Հաղթահարելով մի շարք խոչընդոտներ (տեխնիկական,ֆինանսական, սկզբունքային) ամիսը մեկ անցած մենք կկորոնեինք մեզ ծանոթացնել դպրոցական անցուդարձի, ստեղծագործող երեխաների, ուսուցիչների գործերին, կկորոնեք ինքնաիրատմանը գտնել առաջ տանող նոր ճանփան, դառնալ դպրոցի փոքրիկ «լորորդ իշխանություն»:

Գուցե թերը չհամապատասխանի ձեր գեղագիտական ճաշակին ու հետեղելուստ պահանջներին, բայց. «Մենք արեցինք այն, ինչ կարող ենք, ավելին թող անեն նրանք, ովքեր կարող են»:

Դամմարեղ չենը և չենք լինի,գուցե, անկեղծ երդվում ենք:

10- րդ Բ դասարան

...Դպրոցը պլանում է ծաղիկ է փարել...

Որ գարնան լուսափթիթ արբունքով բաց ենք անում անդրանիկ թերթի ջերմությամբ ոգ ցանկությամբ որոշված շուրջերը: Նկեցան գարուն կա այնտեղ, այնքան ծաղիկ ու սեր, այնքան հարգանք ու ակնածանք...

Հնդհանար տուն,Էվա ...

Հնդհանրությունն ենք ուսուցիչներին, դպրոցի աղջոցյալով բաբախող բոլոր սրտերին, նրա անեն մի անհչան. անկաս հետ առնչվող կիսն արարածին: Չեզ հանար «բոդ գարուն»ներ գան ու չգնան:

Հնդհանրությունն ենք բանկաղին տեղորեին: Ցանկանում ենք, որ **«բազավորեք ու տեղորենք Չեր կրթբաթաի ոգց գարունները»**

Հնդհանրությունն ենք նաև մեզ բոլորիս ծնող սրտությանը՝ մորը.

«Մեր գարուն կյանքի արևն ես դուք, մեր կենսատուներ»

Փնջեց խնբագրությունը

«Ծաղիկների հեքիաթը»

Գարունն ուժասպառ ու գլխապատառ իրեն դպրոց է գրցել, բարձրացել երկրորդ հարկ ու ծաղկաշաղախ թիկունքը հենել պատին: Հետո սթափվել է ու, ճանաչած զանգը, իրեն դուրս գցել...

Օրերս տարրական դպրոցի մասնաշենքում բացվեց հերթական ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են դպրոցի «Կևարդական խնամքի» սաների աշխատանքները: Խմբակի անդամ կարող են դառնալ, բոլոր ցանկացողները:

Լրանց դասդրոցում վիմիններին ուժ են ներարկում և հոգիներում գեղեցկության տոնահանդես բացում դպրոցի բարեխիղճ և իրենց գործի նվիրյալ ուսուցչուհիներ ընկեր Մ. Ավետամյանը և ընկեր Ա. Իսրայելյանը:

Կոպանց և սաների ծասին կարելի է ասել.«Վիրուսն և սեր, իրար ձեռքից բռնած, հեքիաթներ են երկնում»:

Քայլում ես, ու պատին դաջված գարունները ժպտում են քեզ, ալանգներիդ բռնած բերում-կանգնեցնում են իրենց առջև ու սկսում են սեթևեթել աչքերիդ առաջ:

Ոնե արի ու մի հմայվիր... Գարուններ են, ծանկական, պատանեկան վիմիններից ծնված գարունները: Այո, շուտով բոլոր սպիտակ պատերը կգպվեն, կգեղեցկանան, կարիանարհեն «դպրոցի անձրևները» ու ... արվեստ կարարչեն:

Փիրուզա Հայրապետյան
9-րդ Բ դասարան

Ստված մի՛ արասցե...

Սեղանիս «Պարապ վախտի խաղալիք»-ն է, իսկ աչքերիս առաջ հատնում է լոտոն իր բոլոր-բոլոր դրսևորումներով: Դուք կասեք ինչ կապ կա դրանց միջև՝: Հիմա ասեմ:

Արդյանի « Պարապ վախտի խաղալիքը»19-րդ դարից սավառնելով հասել է 21-րդ դար և, անենագիրգ փոխելով, դարձել լոտո: Որ եթե առաջինը խաղի հետ մեկտեղ զարգացնում էր մարդուն և նրա տրամաբանությունը, ապա վերջինս գողացնում է մարդուց մտածելու, դատելու, գործելու և վերբալեն ստեղծելու կարողությունը:

Եթերում սկսեցին երևալ շատերի թևավոր սրախոսությունն ու չշահողի թևաբաստ բողոքը: Սկսեցի ննամ լոտոներնը սկսեցին բուսնել հեռուստաէկրանից: Այժմ պարապ ժողովրդի բախտը և խաղը լոտոն է: Ֆաք, որ դարեր շարունակ գրել է, հիմա միայն բջջում է: Շահելու դեպքում «ջաքանավոր Նազար ես», շահելու դեպքում Շահտոդ Գաբոս: Դեպքերն տեսնելով Բարի, Խոշոր, Հրաշք, Ամողջ, Շանս, Նոր Դար, Հանով, Ռիախ լոտոները անվանից սարսափ են սպառում. Վավեր մի արասցե պարոցական լոտո է հայտնվի, սեր չարաքաղ 8-րդ օր չտևի, և դպրոցն էլ միակ անկունն է, որտեղ պատսպարվում ես այդ վտանգից:

Անանա Սաֆարյան
10-րդ Բ դասարան

ԱՊԳԱՍ

Գարնան գիշ ամիսը փաթաթվեց 10-րդ Բ-ին: Ինչ չշնչեց իր ննամներիկոյ որ չհանգավ: Միայն կարեկցանքի արտահայտությամբ ինչապատված ամբողջ դուրս փայթեց դպրոցի «խանարարությունը»: Որ բեն բանականությունը այդ օրը բացակա էր, ոգևորված ամբողն այնուամենայնիվ զանգեց ծնողներին՝ իրենց կանչը լսարանվնարեցիս:

Չգիտես որտեղից էլ գնդաքիտական գաղտնամն էր արձագեր, և շարժվեցին դեպի պատկերասրահ: Եթե ինչ կատարվեց այնտեղ, բոլոր գնացող գաղտնիները դառնան... միայն ասեմ գիտի տեսա՝ և թե՝ միայն նաև ինչ: Հետո իրենցից շատերին դեպի նեկնիների արբուկ. վաղուց կարուսել չէին նստել...

Պայտ սակվերը ցարձեր էին սահնաներ, ու լուսթ երկերի տակ հնչում էր 10-րդ Բ դասարանի, ուրմ-ների ամենասանալի ծիծաղը: Ամենայունը իր թեթևին էր առել պրոն հատուն տասներորդցիներին և չգիտես ճանապարհի որ հատվածներում թողել ուսում, դաղաքակարություն, ամոթ ու խիղճ:

Նոցն պատին մեկ ուրեշը տեսրեցիք, որ հանկարտում էր Ցրուանց, մոսալ դասարան և ամմիաբանություն:

Ինչ ու դասվանություն տեսավ: Ինչ-որ զգացում բարձրացավ, հասավ մինչև կոկորդ և ... դուրս չեկավ թեզ: Որ լեզ պատիրի, թե՝ լռություն դարձավ: Եթե դասվանի շուրջերում մի դերա չշնչաց «հիսաթափություն գոյականքոլության հոգվով է դրվում»:

ԵՌԱՆԿՅՈՒՆԻ

Ամենքս սերունդը ծղնանց ծնում է դեռևի սրանց ոչ, դեռևի ենք ոչ ամենքդ է խնամքով պարվում ու գերդեկվում: Բայց բարեբախտ է տարբական կրտսերամի երեխային: Նրանք դեռևս չեն ենթարկվել ինքնասիրության, ինչպես մեր հասակի մեծերին: Նրանք դեռևս չեն ենթարկվել ինքնասիրության, ինչպես մեր հասակի մեծերին: Նրանք դեռևս չեն ենթարկվել ինքնասիրության, ինչպես մեր հասակի մեծերին:

Գաղտնիք չէ, որ այս ազդրիքը խեղդվում է դպրոցի մեջ, բայց ոչ՝ մեծերով է դպրոցը, ոչ՝ վերջ այսօր ուսուցիչը... Ոչ՝ ոչ ենք ենթարկվել ինքնասիրության, ինչպես մեր հասակի մեծերին: Նրանք դեռևս չեն ենթարկվել ինքնասիրության, ինչպես մեր հասակի մեծերին:

Գաղտնիք չէ, որ մենք երիտասարդներս, խիստ քարկոծվում ենք մեծերից: Վերջիններս կարծ և կոնկրետ բնութագրումը ունակված է. «Անկիրթ, լպիրշ, թեթևաբարո»: Բայց ինչու՞: Չէ՞ որ հարցը ընենալ առաջ պետք է դիտվեն նաև ակտիվությունն ու պատճառները:

Այժմյան սերունդը բնականոնց օժտված է ամենակարկոր հատկություններով ազատ ոգով և ինքնագիտակցմամբ զգացում:

Որպեսզի ծարմանն բեյրդ կար, սպասում էր միայն հնուս քանդակագործին: Բայց նա չերեկաց, դեռ չի երևում: Ու «վարպետի» անհոգությունից օգտվելով անհատական քանդակագործներ, ամբողխով հարձակվեցին ծարմարի վրա:

Ասանձնացրին, բսեսեցին ի-բար մեջ, ու անեն մեկը գոի բաշվեց իր անկունը կերտելու սեփական բաժին: Եվ ինչու՞ այսօրվա վիճակ տարօրինակ և խորթ թվում: Դպրոցից դուրս են մղվել հոգեկերտ և դատարարակ չանան առարկաները: Իսկ հեռուստատեսությունը հագեցած է միայն լոտոներով կամ էժանագին արվեստի չնչով բաբախող հաղորդումներով:Եվ արի ու տես, որ «ասասյին» տանում են »:

Բայց որոշակի ճասասյի բավարարել դեռևս չի նշանակում տաղանդ լինել: Այուս կողմից մեծերի հանար անընդունելի է նորը, փոքրերին խորթ թվում:

Եվ այս բոլորի դիմաց կանգնած է անձորդ ու միայնակ սերունդ, որ, բնականաբար, պետք է «զեր վիս հեշտագիրով:

Ոչնչով մեղավոր չէ ազատությունը, որը հնարավորություն է տալիս անձին դրսևորվելու այնպես, ինչպես իրականում կա:

Իսկ նպիաան սերնդի մասին կարծիք հայտնելը, թող անեն որ ինքն իրեն հարց տա.«Իսկ ես ս ինչ եմ արել նը բա դասարարակնան համար:

Իսկապես, հնուս թանգակագործը կա վի՞ց էլ հրաշքներ կեներ:

Շատ են ազատ, պահանջկոտ, համառ և ծույլ: Մեր ժամանակ սերունդը գիտեր՝ ինչ է ամոթը, երբեք իրեն թույլ չէր տալիս այսպիսի սանձարձակություն: Ոչ հարգանք կա մեծերի նկատմամբ, ոչ ուշադրություն: Ցորձիր դիտողություն անեՀ բեգանցից բարձր կգոռան ու կհամոզեն, որ դու ես սխալ:

Այսօր ինֆորմացիայի այնպիսի աղբյուրներ կան և այնպիսի բաներ են տեսնում, որ մեր ժամանակ արգելված էր, դրա համար էլ սրբությունները ոտնահարված են: Իսկ իրենց որոշումների մեջ այնքան են ազատ, որ էլ ծնողի կարծիք հաշվի չեն առնում: Է՛հ, փողոցով քայլում ես, տեսնում հաճբուրվող զույգեր և քիչ է մնում ասես.«Ներեցեք, որ ձեզ տեսա»: Չէ՞ ես սերունդը հանցագործ է, ես աշխարհը կքանի:

Փիրուզա Հայրապետյան

ՄՐԱՄՏԱՆՔ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ

Դասի ժամանակ աշակերտների մի մասը գիտի, թե ինչ է ասում, իսկ մյուս մասը ասում է այն, ինչ գիտի:

☆ ☆ ☆

Աշակերտը.«Տեր Աստված, այնպես արա,որ Մարիաը դառնա Դավիթի մայրաքաղաքը, ինչպես ես եմ գրել ստուգողական աշխատանքում»:

☆ ☆ ☆

9-րդ Բ դասարանի ու սուցիչներին խորհուրդ ենք տալիս այստեղեն գրանցել միայն «ենթակաները», չարչարանքը քիչ կլինի: Եվ հետո ինչպիսի հաճույք, երբ պարզվի, որ դասարանում ամենաանընդունելի «ենթկանեռ» կան:

☆ ☆ ☆

Վայ այն աշակերտի ոտքերին, որոնք գլխի թեպտրաքցիր գլուխ չեն հանում:

☆ ☆ ☆

Ինչ էլ որ գիտնականները ասեն-ծեն, մինչև-ի, պատասխանելու է աշակերտը:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ

10-րդ Բ դասարանում գրականության ժամ էր: Որ սուցչուհին ասաց.

– Այն, որ Կրանանալ Սահակյանն էլ բանաստեղծ է, դեռ բավարար պատճառ չէ,որ Ավետիք Իսահակյանից հիսապափնք:

☆ ☆ ☆

Որ սուցիչը դիմում է աշակերտին.

– Ի՞նչ սարբերություն կա քո և բուռ դանակի միջև:

– Չգիտեմ:

– Ի՞ սարբերություն բուռ մորի, բուռ դանակը սրվում է,- պատասխանեց աշակերտը:

☆ ☆ ☆

Թռմանյան էին անցնում, և ուսուցիչն ասաց.

– Դավաստացե՛ք, երեխանե՛ր, Սեծ Լոեցեին մեզ չէր ուզում անիծել, երբ գրոեց. «Լեպրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք»:

Գլուխկոտրուկ «Աշխարհագրություն»

1. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է խաղաղություն:
2. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է ձան :
3. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է ձաքուր,գեղեցիկ:
4. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է փտած ծառ:
5. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է ապր-բի պահնստ:
6. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է աստվածների քաղաք:
7. Ո՞ր երկրի բնակիչների լեզվով է լեռը յաՀա:
8. Այդ երկրի ո՞ր ջաձա-ն է ամենաբարձրը:
9. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է հարգությունն տուն
10. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է ջրհոր, աղբյուր
11. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է լուսնի քաղաք
12. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է հրեշտակների քաղաք
13. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է շենք, սկիզբ
14. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է բնակարան ջրի մեջ
15. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է բլրի տե ղ
16. Ո՞ր-ն ամենածանր ընտանար ունեցող ծառը
17. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է աստծո պարգև
18. Ո՞ր ծառն են անվանում «կոզ ծառ»
19. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է փառահեղ ամրոց
20. Ո՞ր մայրաք-ի անվան իմաստն է կնճիթի ծայր

Տառերը կարելի է միացնել արից մախ , մախից արշ, վերևից ներքև, ներքևից վերև. Յուրաքանչյուր տառ օգտագործել մեկ անգամ: Ցիշտ լուծելով գլուխկոտրուկը չջնջված տառերով կկարդաք հայ մեծ գրողներից մեկի անունը, ազգանունը և ասույթը:

Պատիժներ և խրախուսանքներ շատ են եղել, բայց երբեք չեմ պատժել հիպերակտիվության կամ դանդաղկոտության, կենսափորձի պակասի , անկարողության համար: Եվ երբեք չեմ խրախուսել մի բանի համար, ինչը ստացել է ո՛չ իր ուժերով՝ գեղեցկություն, խելացիություն, ուժ, առողջություն:

Եղել են նաև ապտակներ՝ տարբեր հետևանքներով: Եղել են դեպքեր, որ երեխան սաստվել է իմ ներկայությունից, բայց չի փոխվել վարքը, քանզի ծնողը չի կանգնել ուսուցչի կողքին, արդարացրել է իր երեխային և ավելորդ մայրական հույզերով խանգարել դաստիարակման գործընթացին: Եվ որպես կանոն՝ նման դեպքերում հետո երեխաները կյանքում հայտնվում են բարդ իրավիճակներում, կյանքը ի՛ր պատիժն է տալիս՝ ավելի դաժան, և միայն այդ ժամանակ է երեխան հիշում անկեղծորեն իր կողքին կանգնած ուսուցչին, զղջում, որ ճիշտ չի հասկացել նրան:

Մի շատ կարևոր դիտարկում ևս. խրախուսանքի և պատժի արդյունավետությունը հակադարձ համեմատական է դրանց կիրառման հաճախականությանը: Ընդհանրապես, այն, ինչը անընդհատ է ու շատ, արդեն վատ է: Ե՛վ պատիժը, և՛ խրախուսանքը պիտի լինեն հազվադեպ, տեղին, ժամանակին, արժևորված, հետաքրքիր, ինտրիգային, այո՛, չկրկնվող (որքան հնարավոր է):

Եվ վերջին դիտարկումս ամենագեղեցիկ հնարքն է, որ օգտագործում եմ իմ դասաժամերին, և առարկան դա լիարժեք թույլ է տալիս, ավելին, իմ ամենամեծ <<միջոցն է>> գրականությունն իր բազմաթիվ թեմաներով ու կերպարներով, դրանց վերլուծումն ու քննարկումը, իրենց այդ կերպարներում գտնելն ու այլոց օրինակով՝ վրադաստիարակվելը:

Ավելի լավ է և ճիշտ կանխարգելել վատ արարքը տեղին և ժամանակին, քան հասնել մի կետի, երբ պատիժն ավելի տհաճ համ կունենա:

Սա էլ յուրահատուկ <<պատիժ է>> գրականության միջոցով, մի տեսակ արվեստաբույր պատիժ է:

Օրինակ՝ անցնում ենք Նարեկացի և նրա օրինակով սովորեցնում ենք հասկանալ և ընդունել իրենց մեղքը, կարևորում փոխվելու ցանկությունը, արժևորում աստվածաշնչյան պատվիրաններն ու խոստովանում, ապաշխարում:

<<Հոր զղջումն>> անցնելիս սլաքներն ուղղում եմ նեղացկոտ, խռովկան, երեխաներին և ցույց տալիս, որ հայրերի ու մայրերի բոլոր պատիժները ծնվում են սիրուց և միտված են լավ մարդ դարձնելուն, պարզապես մեծերի մեղքը ձեր արարքները իրենց տարիների փորձով չափելն է: Հրանտ Մաթևոսյանի <<Հացը>> անցնելիս ցանկացած ուսուցիչ շատ գեղարվեստորեն կարող է թիրախավորված երեխաներին և ողջ դասարանին հասցնել ինքնախարազանման և ինքնապատժի բարձրակետին: Իսկ Թումանյանը, Սահյանը աննկատ օգնում են, որ իմ աշխատանքում և դաստիարակության մեծ ու կարևոր գործում պատիժը կարևորվի, այո՛, և դառնա հետևանքների արվեստ:

Եզրակացություն

Պատիժը ծնվել է մարդու մեղքի հետ ու դեռ հեռու է գիտակցությունը մեղքից ազատվելու մեր ճամփան: Ուստի պատիժն անհրաժեշտ է դաստիարակության մեջ, քանզի այն միջոց է:

Եթե բացառում ենք այն կամ խուսափում ամեն տեսակի առճակատումից ու բախումներից, հանգում ենք երեսառաձության, ապա՝ թողտվության:

Պատիժը բացառելու դեպքում մենք խեղաթյուրում ենք երեխային, նրա մոտ չի ձևավորվում պատկերացումներ թույլատրելիի սահմանների մասին, ազատությունը թողտվության հետ է շփոթում, դառնում է եսակենտրոն, անհարգալից մարդկանց հանդեպ:

Բայց կարևորելով պատիժը պիտի չմոռանանք, որ նախ պետք է հասկանանք դրա նպատակը՝ սովորեցնել երեխային ճիշտ վարվել: Նա պիտի այն դիտի որպես իր որոշ սխալ արարքների արդյունք, ոչ թե որպես չար կամքի դրսևորում: Պետք է ոչ թե վիրավորել, այլ ցույց տալ, որ սա ու նա չի կարելի: Պետք է արդարացի լինել ու պատժել արարքը:

Վատ երեխա չի լինում, վատ արարքներ են լինում: Պիտի այնպես պատժել, որ ուսուցիչը խոցելի չլինի: Պիտի պատժել սիրելով ու հարգելով երեխայի միջի մարդուն:

Ցավոք, լինում են նաև դեպքեր, երբ ծնողը չի բռնում ուսուցչի ձեռքը ,և չի լինում:

Եթե պատժից հետո կա ցանկալի վերջնարդյունք ու երեխայի կողմից հարգանք, եթե անվնաս է մնում ուսուցչի հեղինակությունը, ուրեմն պատիժն արդարացված է, և ուսուցիչն իր տեղում է:

Դաստիարակության համար հստակ մեկ բաղադրատոմս չկա ու չի կարող լինել, քանզի 2 միանման մարդ չկա: Ուստի ուսուցիչը պիտի լինի հնարամիտ, խորագետ, հոգեբան ու մեծ, ստեղծագործական հնարքներով օժտված:

Պատժենք, սիրելի՛ ուսուցիչներ, բայց տեղին, սիրելով և այնպես, որ այն դառնա հետևանքների արվեստ:

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ

<<Աստուածաշունչ>> (Մոսկվա <<Զևս>> 1994թ.)

Աֆորիզմներ (Երևան <<Հայաստան>> 1989 թ.)

Վարդգես Պետրոսյան <<Վերջին ուսուցիչը>> (Երևան <<Հայաստան>> 1978 թ.)

Learning English ամերիկյան ամսագիր (ակտիվ է)

Ջոն Քինգ <<Ինչպե՞ս պետք է դպրոցները վարվեն վատ վարք ունեցող սովորողների հետ>> հոդված (ակտիվ է)